ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Բնագիտական թանգարանները որպես գեոտուրիզմի զարգացման գործոն» թեմայով միջազգային գիտաժողովը

Սույն թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ-ում իր աշխատանքն սկսեց «Բնագիտական թանգարանները որպես գեոտուրիզմի զարգացման գործոն» թեմայով միջազգային գիտաժողովը: Այն նվիրված էր ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի 80-ամյակին:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը մասնավորապես նշեց. «Ավելի քան 80 տարվա ընթացքում Երկրաբանական թանգարանը ծավալել է գիտական, գիտակազմակերպչական գործունեություն՝ ավելի ճանաչելի դարձնելով Հայաստանի հետաքրքիր երկրաբանական կառուցվածքը: Լինելով փոքր թանգարան, այնուամենայնիվ, այն հայտնի է ամբողջ աշխարհում իր ունիկալ ցուցանիշներով, իր կրթական, գիտահանրամատչելի և ճանաչողական միջոցառումներով: Այսօրվա գիտաժողովի թեման է գեոտուրիզմը, որի կազմակերպական ձևերից է գեոպարկը: Քանի որ Հայաստանի տարածքն աչքի է ընկնում իր ուրույն և բարդ երկրաբանական կառուցվածքով՝ Հայաստանում կան բոլոր նախադրյալները գեոպարկերի ստեղծման համար: Մեր ինստիտուտը կոնկրետ քայլեր է ձեռնարկում՝ Հայաստանում գեոպարկերի ծրագիր իրականացնելու»:

Երկրաբանական թանգարանի 80-ամյա գործունեության նվաճումները ներկայացրեց թանգարանի տնօրեն Գայանե Գրիգորյանը:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբանական թանգարանը ժամանակավոր ցուցադրության տեսքով ստեղծվել է 1937 թվականին երկրաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ: Թանգարանի առաջին ցուցադրությունը կազմվել է նրա հարուստ հավաքածուների՝ մոտ 4500 նմուշի հիման վրա: Հետագայում թանգարանի հավաքածուները համալրվել են Հայաստանի և այլ երկրների երկրաբանների կողմից: 1944 թվականից թանգարանը կոչվում է Հովհաննես Կարապետյանի անունով:

Թանգարանում ցուցադրված են օգտակար հանածոների, ապարների, բրածո կենդանիների և բույսերի նմուշներ, քարտեզներ: Ֆոնդում կա ավելի քան 13 հազար նմուշ: Ցուցանմուշները ցուցադրված են 6 բաժիններում՝ հանքաբանության, հնէաբանության, քարաբանության, օգտակար հանածոների, Հայաստանի հանքային ջրերի, Հայաստանի բնական հուշարձանների:

«Գիտաժողովի նպատակն է համախմբել բնագիտական թանգարանների ներուժը՝ նպաստելու ՀՀ-ում թանգարանների և գեոտուրիզմի զարգացմանը»,- ամփոփեց Գայանե Գրիգորյանը:

Քառօրյա գիտաժողովի ընթացքում Հայաստանի, Ռուսաստանի և Ավստրալիայի 31 մասնակիցներ ներկայացրեցին զեկուցումներ Հայաստանում երկրաբանության պատմության, բնապատմական թանգարանների արդի հիմնահարցերի, գեոտուրիզմի, գիտական տուրիզմի, էկոտուրիզմի զարգացման, թանգարանային կրթության և տուրիզմի, լքված հանքավայրերի վերականգնման և դրանք հանգստյան գոտիների վերածելու, երկրաբանական հուշարձանների պահպանության և այլ թեմաների վերաբերյալ:

Գիտաժողովի կազմակերպմանն աջակցել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, շրջակա միջավայրի նախարարությունը, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունը, Դի Վի Վի ինթերնեյշնալը և Երևանի քաղաքապետարանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն